

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ**

Երևան 2011

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Մ 123

Հրատարակվում է ՀՊՏՀ
գիտական խորհրդի որոշմամբ

USՌԻԳՆԷ
ՀՊՏՀ ԳՐԱԴԱՐԱՆ

Կազմողներ՝ Կ. Գ. Գրիգորյան
տ.գ.թ., դոցենտ
Ս. Ա. Կարախանյան

Մ 123 Մագիստրոսական ատենախոսության կատարման և պաշտպանության կազմակերպման մեթոդական ցուցումներ / ՀՊՏՀ - եր.: Տնտեսագետ, 2011.- 32 էջ:

Սույն մեթոդական ցուցումները ծառայում են որպես ուսումնամեթոդական ուղեցույց մագիստրոսական ատենախոսությունը շարադրելու, ղեկավարելու և պաշտպանելու գործընթացում: Ենթադրյալ է, որ դասախոսների և ուսանողների համար:


ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58

28507 ցրապիչ
ՀՊՏՀ Գրադարան
ԱԴՅՄ Ե ԽՈՒՄԵՆ

ISBN 978-9939-61-028-3

© «Տնտեսագետ» հրատ., 2011

ՀՊՏՀ գրադարան



000008443

Բովանդակություն

| | |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Մագիստրոսական ատենախոսությունը՝ որպես գիտահետազոտական աշխատանք | 4 |
| 2. Գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանությունը | 7 |
| 2.1. Գիտական հետազոտության ընթացքի ընդհանուր սխեման և գիտական իմացաբանության մեթոդների օգտագործումը | 7 |
| 2.2. Գիտահետազոտական աշխատանքի լեզուն և հիմնական հասկացությունները | 10 |
| 3. Մագիստրոսական ատենախոսության կատարման նախապատրաստական աշխատանքները և գիտական տեղեկատվության հավաքագրումը | 16 |
| 3.1. Թեմայի ընտրությունը | 16 |
| 3.2. Աշխատանքային պլանի կազմումը | 17 |
| 3.3. Գրականության ուսումնասիրությունը և փաստացի տվյալների հավաքագրումը | 19 |
| Մագիստրոսական ատենախոսության կառուցվածքը և պաշտպանության կարգը | 20 |
| 4.1. Մագիստրոսական ատենախոսության կառուցվածքը և շարադրումը | 21 |
| 4.2. Մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունը և պահանջվող փաստաթղթերը | 25 |
| 5. Դավելվածներ | 30 |

1. Մագիստրոսական ատենախոսությունը՝ որպես գիտահետազոտական աշխատանք

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մագիստրոսական կրթությունը (տևողությունը առկա ուսուցման համակարգում 2 տարի է, հեռակա ուսուցման համակարգում՝ 2.5 տարի, այդ թվում՝ առաջին երեք կիսամյակը, կամ առաջին չորս կիսամյակը, հեռակա ուսուցման համակարգում) հունանիտար, սոցիալական, մաթեմատիկական, ընդհանուր մասնագիտական և մասնագիտացման դասընթացների ուսուցումն է, որն ավարտվում է քննություններով և ստուգարքներով, իսկ 4-րդ կիսամյակը, կամ 5-րդ կիսամյակը, հեռակա ուսուցման համակարգում) ներառում է գիտահետազոտական պրակտիկայի անցկացումը, մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունը և մասնագիտական պետական քննությունը:

Մագիստրոսական ատենախոսության նպատակն է խորացնել մագիստրանտի ստացած տեսական, գործնական գիտելիքները, զարգացնել ինքնուրույն գիտական աշխատանք կատարելու ունակությունները և տիրապետել գիտական հետազոտությունների մեթոդներին:

Մագիստրոսական ատենախոսությունը գիտական բովանդակությամբ որակյալ աշխատանք է, որն ունի ներքին միասնություն և արտացոլում է ընտրված թեմայի մշակման ընթացքն ու արդյունքները: Այն պետք է համապատասխանի ժամանակակից գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակին, իսկ թեման լինի արդիական:

Մագիստրոսական ատենախոսությունը ներկայացվում է այն տեսքով, որը հնարավորություն է ընձեռում դատելու, թե ինչ ամբողջականությամբ են արտացոլված և հիմնավորված նրանում արծարծված դրույթները, եզրակացությունները, առաջարկությունները, դրանց նորույթն ու նշանակությունը: Այն այլ գիտական աշխա-

տանքներից տարբերվում է ամենից առաջ նրանով, որ ունի նաև որակավորման գործառույթ, այսինքն՝ իրականացման նպատակը հրապարակային պաշտպանությունն է և մագիստրոսի որակավորման աստիճան ստանալը: Այս տեսակետից ատենախոսության հեղինակի հիմնական նպատակը ամենից առաջ ինքնուրույն գիտական հետազոտություններ կատարել կարողանալն ու որոշակի գիտական խնդիրներ լուծելն է:

Մագիստրոսական ատենախոսությունը հավասարապես արտացոլում է ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ գիտության ինացության հատուկ մեթոդները, որոնց օգտագործման օրինաչափությունները հիմնավորում են յուրաքանչյուր որոշակի ղեկքի համար օգտագործելիս: Այստեղ բովանդակության հիմքը իր մեջ սկզբունքորեն նոր նյութ ընդգրկելով՝ նոր գործոններ, օրինաչափություններ և երևույթներ են հայտնաբերում կամ նախապես հայտնի դրույթների գիտական այլ դիրքորոշում՝ միանգամայն այլ ասպեկտով:

Մագիստրոսական ատենախոսության բովանդակությունը, առավելապես համակարգված տեսքով, ներկայացնում է ինչպես գիտական ուսումնասիրության ելքային նախադրյալները, այնպես էլ դրա ողջ ընթացքն ու արդյունքները: Ատենախոսությունում շարադրվում են ոչ միայն պարզապես գիտական փաստեր, այլ նաև կատարվում է դրանց բազմակողմանի վերլուծություն, դիտարկվում է նմանատիպ իրադրությունների առկայությունը, քննարկվում ունեցած տարբերակները, հիմնավորվում դրանցից մեկի ընտրությունը:

Մագիստրոսական ատենախոսության շարադրման համար բնորոշ են դատողության փաստարկունը և տվյալների ճշտությունը: Մագիստրոսի աստիճանը գիտական չէ, ակադեմիական է, որն ամենից առաջ արտահայտում է բարձրագույն ուսումնական հաստատության մագիստրատուրայի շրջանավարտի կրթական մակարդակը և վկայակոչում նրա կարողությունն ու փորձը, ինչը հատկանշական է սկսնակ գիտական աշխատողին:

Մագիստրոսական ատենախոսությունը թեև համարվում է ինքնուրույն գիտական հետազոտություն, այդուհանդերձ, դասվում է առավելապես ուսումնահետազոտական աշխատանքների շարքին, որոնց հիմքում ընկած են արդեն հայտնի նմուշօրինակները:

Մագիստրոսական ատենախոսության գիտական մակարդակը միշտ պետք է համապատասխանի կրթական ծրագրին: Նման աշխատանքը պետք է լուծի ոչ այնքան գիտական խնդիրներ, որքան ծառայի որպես վկայակոչում, որ հեղինակը սովորել է և տիրապետում է ինքնուրույն գիտական որոնումներ կատարելու արվեստը, նկատում է մասնագիտական խնդիրները և պատկերացում կազմում դրանց լուծման առավել ընդհանուր ձևերի և մեթոդների մասին:

Մագիստրոսի աստիճանի հայցվորը պետական որակավորման հանձնաժողովին է ներկայացնում մագիստրոսական ատենախոսությունը՝ գիտական ղեկավարի կարծիքի հետ միասին, և պաշտպանում: Մինչև մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունը պարտադիր գրախոսվում է մասնագիտական այլ ամբիոնների կամ բուհից դուրս՝ այլ կազմակերպությունների մասնագետների կողմից:

2. Գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանությունը

2.1. Գիտական հետազոտության ընթացքի ընդհանուր սխեման և գիտական իմացաբանության մեթոդների օգտագործումը

Ամբողջ գիտական հետազոտության ընթացքը կարելի է պատկերացնել հետևյալ տրամաբանական սխեմայի տեսքով.

- ա) ընտրված թեմայի արդիականության հիմնավորում,
- բ) հետազոտության նպատակների ու խնդիրների որոշում և ներկայացում,
- գ) հետազոտության օբյեկտի և առարկայի ձևակերպում,
- դ) հետազոտության մեթոդների ընտրություն,
- ե) հետազոտության ընթացքի նկարագրություն,
- զ) հետազոտության արդյունքների քննարկում,
- է) եզրակացությունների ձևակերպում և ստացված արդյունքների գնահատում:

Ընտրված թեմայի արդիականության հիմնավորումը ցանկացած հետազոտության սկզբնական փուլն է: Մագիստրոսական ատենախոսության մեջ «արդիականություն» հասկացության օգտագործումն ունի մի յուրահատկություն: Անհրաժեշտություն չկա արդիականության նկարագրությունն սկսել շատ հեռու թեմաներից: Բավական է մեկ-երկու մեքենագիր էջի սահմաններում ներկայացնել գլխավորը՝ խնդրահարույց իրավիճակի էությունը, ինչից և բխում է թեմայի արդիականությունը: Այսպիսով, խնդրահարույց իրավիճակի ձևակերպումը ներածության կարևորագույն տարրերից է. դրա համար էլ հարկ է «խնդիր» հասկացությանն անդրադառնալ ավելի մանրամասնորեն:

Ընդունված կարգ է՝ գիտական հիմնախնդրի ձևակերպումը առաջնայինը երկրորդականից տարանջատելու կարողությունն է. այն բանի բացահայտումը, թե գիտության հետազոտության առար-

կայի մասին ինչն է արդեն հայտնի և ինչն է առայժմ անհայտ: Այս պատճառով էլ, եթե մագիստրանտին հաջողվում է ցույց տալ, թե որտեղ են տարանջատվում հետազոտության առարկայի մասին գիտեցածն ու չգիտեցածը, նրան դժվար չի լինի միանշանակ և հստակ բնորոշել, հետևաբար և ձևակերպել գիտական խնդրի էությունը: Այսպիսի գիտական աշխատանքների արդիականությունն ընդհանուր առմամբ պետք է գնահատել այն սկզբունքային ուղղության տեսանկյունից, որն ընտրել է ատենախոսության հեղինակը, կամ էլ այն գիտական ներդրման տեսանկյունից, որն ընկած է ընդհանուր հիմնադրույթի մշակման գործընթացի հիմքում:

Մագիստրանտները ատենախոսության համար հաճախ խուսափում են նեղ թեմաներ վերցնել: Ավելի լայն թեմաներ ընդգրկող աշխատանքները, որպես կանոն, լինում են մակերեսային և քիչ ինքնուրույն, իսկ նեղ թեմաներով աշխատանքները՝ ավելի խորը և մանրամասն: Սկզբում թվում է, թե թեման այնքան նեղ է, որ գրելու շատ նյութ գրեթե չկա, բայց ժանոթանալով նյութին՝ այդ մտավախությունն անցնում է, և ընթացքում ի հայտ են գալիս խնդրի արժարժման այնպիսի կողմեր, որոնց մասին հեղինակը նախկինում չէր էլ մտածել:

Ընտրված թեմայի արդիականության հիմանվորումից հետո տրամաբանորեն անցում է կատարվում հետազոտության նպատակների ձևակերպմանը, ինչպես նաև ծագած խնդիրների ներկայացմանը, որոնք պետք է լուծվեն ըստ հարկի:

Խնդիրների ձևակերպումը որքան հնարավոր է պետք է կատարվի մաքրամասն, քանի որ դրանց լուծման ուղիների նկարագրությունը կազմելու են ատենախոսության գլուխները: Դա կարևոր է նաև այն պատճառով, որ աշխատանքի գլուխների վերնագրերը ծագում են հենց հետազոտության խնդիրների ձևակերպումից:

Այնուհետև ձևակերպվում են հետազոտության օբյեկտն ու առարկան: Օբյեկտը գործընթաց է կամ երևույթ, որն առաջացնում է խնդրահարույց իրավիճակը, և որն էլ ընտրվում է հետազոտության համար: Հետազոտության առարկան այն է, ինչն ընկած է օբյեկտի

սահմաններում: Հետազոտության օբյեկտն ու առարկան, որպես գիտական գործընթացի կատեգորիաներ, փոխհարաբերվում են միմյանց հետ ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին տարրերով: Օբյեկտի մեջ առանձնանում է այն մասը, որը հետազոտության առարկան է: Այդ ուղղությամբ պետք է կենտրոնացված լինի մագիստրանտի ուշադրությունը, և հենց հետազոտության առարկան էլ որոշում է ատենախոսության թեման, որը որպես աշխատանքի վերնագիր ներկայացվում է աշխատանքի տիտղոսաթերթի վրա:

Գիտական հետազոտության շատ կարևոր փուլերից է **հետազոտության մեթոդների ընտրությունը**, որը կիրառվում է փաստացի նյութերի հայթայթման և դրանց ուսումնասիրման ընթացքում՝ լինելով անհրաժեշտ պայման՝ առաջադրված նպատակներին հասնելու համար:

Սովորաբար հետազոտության տեսամեթոդաբանական աղբյուր է հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը:

Բացի հատուկ մեթոդներից, որոնք բնորոշ են առհասարակ գիտական գիտելիքների շրջանակներին, գոյություն ունեն գիտական իմացաբանության ընդհանուր մեթոդներ ևս, որոնք, ի տարբերություն հատուկ մեթոդների, լայնորեն կիրառվում են հետազոտական գործընթացներում և տարբեր բնույթի գիտություններում:

Գիտական իմացաբանության ընդհանուր մեթոդները սովորաբար բաժանվում են 3 խոշոր խմբի.

1) էմպիրիկ (փորձարարական) հետազոտության մեթոդներ (դիտարկում, համեմատում, չափում, փորձ),

2) մեթոդներ, որոնք օգտագործվում են ինչպես էմպիրիկ, այնպես էլ տեսական հետազոտություններում (աբստրահում, անալիզ և սինթեզ, ինդուկցիա և դեդուկցիա, մոդելավորում և այլն),

3) տեսական հետազոտության մեթոդներ (աբստրակտից որոշակիին անցնելը և այլն):

Ատենախոսությունում, բացի խիստ տեսական թեմաներից, պարտադիր օգտագործվում են տնտեսամաթեմատիկական մեթոդներ:

Գետազոտության ընթացքի նկարագրությունը ատենախոսության հիմնական մասն է, որում արտացոլվում են հետազոտության մեթոդներն ու տեխնիկան՝ տրամաբանական օրենքների և կանոնների կիրառմամբ:

Գիտական հետազոտության կարևոր փուլ է նաև վերջինիս արդյունքների քննարկումը, որը կատարվում է ղեկավարի մասնակցությամբ և արտացոլվում ատենախոսությունում:

Գիտական հետազոտության վերջնական փուլը եզրակացություններն են, որոնք պարունակում են այն նորն ու էականը, ինչը կատարված ատենախոսական աշխատանքի գիտական և գործնական արդյունքն է:

2.2. Գիտահետազոտական աշխատանքի լեզուն և հիմնական հասկացությունները

Ատենախոսությանը նախապատրաստվելիս մագիստրանտը պետք է տիրապետի այն լեզվին, որով գիտությամբ զբաղվողները հաղորդակցվում են միմյանց հետ: Գիտական հաղորդակցության նորմերը խստորեն կանոնակարգում են գիտական տեղեկատվության շարադրման բնույթը՝ պահանջելով հրաժարվել լեզվական արտահայտչամիջոցների ուղիղ ձևերով սեփական կարծիքի արտահայտումից: Այս առնչությամբ ատենախոսության հեղինակներն աշխատում են զերծ մնալ «ես» անձնական դերանունն օգտագործելուց: Այժմ դարձել է չգրված օրենք, երբ ատենախոսության հեղինակը ելույթ է ունենում հոգնակիի դեպքով օգտագործելով «մենք» դերանունը, որի նպատակը իր կարծիքը գիտական դպրոցի կամ գիտական ուղղվածություն ունեցող մի խումբ մարդկանց կարծիքին համահունչ դարձնելն է:

Գիտական գրավոր նյութի լեզվի բնորոշ հատկանանիշներից է նյութի շարադրման ձևատրամաբանական եղանակը: Առհասարակ գիտական նյութի բնորոշ հատկանիշներն են ավարտուն իմաստը, ամբողջականությունը և փոխկապված լինելը:

Տրամաբանական կապերի արտահայտման համար, կարևոր են կապի հատուկ գործառնական-շարահյութական (ֆունկցիոնալ-սինտակտիկ) միջոցները, որոնք բնորոշում են մտքի զարգացման հերթականությունը (սկզբում, նախ և առաջ, հետո, առաջին հերթին, երկրորդ հերթին, այսինքն, այսպիսով և այլն), հակասական հարաբերությունները (սակայն, այդ ընթացքում, այն ժամանակ, երբ, այնուամենայնիվ), պատճառահետևանքային կապերը (հետևաբար, այդ պատճառով, դրա շնորհիվ, դրան համապատասխան, դրա հետևանքով, բացի դրանից, դրա հետ մեկտեղ, այդ թվում նաև), անցումը մեկ մտքից մյուսին:

Գիտության լեզվի հիմքում ընկած են որոշ բառեր ու բառակապակցություններ, որոնցից հիմնականներն են.

1. *Մագիստրոսական ատենախոսությունը* գիտահետազոտական աշխատանք է մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար:

2. *Մագիստրոսական ատենախոսության թեմայի արդիակառուցության* կարևորության աստիճանը տվյալ պահին և տվյալ իրավիճակում որոշակի խնդիրների լուծման համար է:

3. *Ուսումնասիրման օբյեկտը* խնդրահարույց իրավիճակներ առաջացնող գործընթաց կամ երևույթ է, որն ընտրվում է ուսումնասիրության համար:

4. *Չետազոտության* առարկան այն ամենն է, ինչը գտնվում է ուսումնասիրման օբյեկտի սահմաններում քննարկման որոշակի ասպեկտով:

5. *Նույնատիպությունը* վերլուծության արդյունքում երկու օբյեկտների մի քանի հատկանիշների նմանության մասին եզրակացությունն է:

6. *Ասպեկտը* տեսանկյուն է, որի ներքո դիտվում են հետազոտման օբյեկտը և առարկան:

7. *Ուսումնասիրության մեթոդը* արդեն իսկ կուտակված գիտելիքների օգտագործման եղանակ է նոր գիտելիքներ ստանալու համար: Այն նոր գիտական փաստեր ստանալու միջոց է:

8. *Վարկածը (հիպոթեզ)* գիտական ենթադրություն է, որն առաջադրվում է երևույթների բացատրության համար:

9. *Ինդուկցիան* եզրակացության ձև է՝ մասնակի փաստերից դեպի ընդհանուր եզրակացություններ:

10. *Դեդուկցիան* ընդհանուրից դեպի մասնակին եզրակացության ձև է:

11. *Գաղափարը* որոշիչ դրույթ է հայացքների և տեսությունների ընդհանուր համակարգում:

12. *Տեղեկատվությունը* լինում է՝

ա) ամփոփիչ՝ գիտական փաստաթղթերի ամփոփագրերում երկրորդային տեղեկատվություն,

բ) ռելևանտային՝ գիտական խնդրի նախատիպի նկարագրությունում զետեղված տեղեկատվություն,

գ) ռեֆերատիվ՝ գիտական սկզբնական փաստաթղթերում ներառված երկրորդային տեղեկատվություն,

դ) ազդանշանային՝ տարբեր մակարդակի ճշգրտման երկրորդային տեղեկատվություն՝ կատարելով նախնական իրազեկման գործառույթ,

ե) տեղեկատու՝ երկրորդային տեղեկատվություն, համակարգված կարճ տեղեկություններ գիտելիքների որևէ բնագավառի մասին:

13. *Գիտական հետազոտությունը* նոր գիտական գիտելիքների մշակման գործընթաց է, ճանաչողական գործունեության ձևերից մեկը, որը բնութագրվում է անաչառությամբ, վերարտադրությամբ, ապացուցողականությամբ և ճշգրտությամբ:

14. *Հետազոտական մասնագիտությունը* (հաճախակի անվանվում է նաև հետազոտական ուղղություն) կայուն ձևավորված հետազոտման բնագավառ է, որը ներառում է որոշակի քանակի հետազոտական խնդիրներ որևէ գիտությունից, այդ թվում նաև իր օգտագործման բնագավառը:

15. *Հետազոտական հանձնարարությունը* պարզագույն ձևով կազմակերպված հետազոտական գործողությունների համալիր է,

որի կատարման ժամկետները սահմանվում են բավական բարձր ճշգրտությամբ:

16. *Կատեգորիան* տրամաբանական մտածողության ձև է, որում բացահայտվում են ուսումնասիրվող առարկաների ներքին էական կողմերն ու հարաբերությունները:

17. *Հայեցակարգը* հայացքների՝ համակարգ է, հիմնական միտք, երբ բացահայտվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ներկայացվում առաջխաղացման ուղիները:

18. *Իրավիճակը* հասարակական կյանքի որևէ բնագավառում ստեղծված դրություն է:

19. *Կարծ հաղորդագրությունը* գիտական փաստաթուղթ է, որը պարունակում է գիտահետազոտական կամ փորձարարական արդյունքների (երբեմն սկզբնական) սեղմ շարադրանք: Նման փաստաթղթի նշանակությունը կատարված աշխատանքների արդյունքների օպերատիվ հաղորդումն է կատարման ցանկացած փուլում:

20. *Առանցքային բառ՝ բառ* կամ բառակապակցություն, որն առավել լիարժեք և առանձնահատուկ ձևով բնութագրում է գիտական փաստաթղթի կամ դրա մի մասի բովանդակությունը:

21. *Գիտական ծանաչման մեթոդաբանությունը* ուսմունք է գիտահետազոտական գործունեության ձևերի, եղանակների և սկզբունքների մասին:

22. *Գիտությունը* մարդկային գործունեության ոլորտ է, որի գործառույթն իրականության մասին անաչառ գիտելիքների մշակումն է և դրանց տեսականորեն համակարգումը:

23. *Գիտական թեման* գիտական բնույթի խնդիր է, որը պահանջում է գիտական ուսումնասիրություն:

24. *Գիտական տեսությունը* վերացական հասկացությունների և դրույթների համակարգ է, որը ցույց է տալիս իրականության ոչ անմիջական, այլ իդեալականացված արտացոլումը:

25. *Գիտական ծանաչումը* հետազոտություն է, որը բնութագրվում է իրեն հատուկ նպատակներով և նոր գիտելիքների ստացման ու ստուգման մեթոդներով:

26. *Գիտահետազոտական աշխատանքի գիտատեխնիկական ուղղությունը* ինքնուրույն տեխնիկական խնդիր է, որը հետազայուն ապահովում է խնդրի լուծումը:

27. *Գիտական գեկույցը* գիտահետազոտական կամ փորձակոնստրուկտորական աշխատանքների շարադրանք պարունակող գիտական փաստաթուղթ է, որը կան տպագրված է, կան ներկայացվում է լսարաններում:

28. *Գիտական փաստը* իրադարձություն կամ երևույթ է, որը հիմք է եզրակացություն կատարելու կամ հաստատելու համար: Այն գիտական գիտելիքի հիմնական բաղադրիչներից է:

29. *Ամփոփումը* բաղկացած է որևէ թեմայի հետ կապված համակարգված գիտական տվյալներից, որոնք ստացվել են սկզբնաղբյուրների վերլուծության արդյունքում: Այն ժանոթացնում է ժամանակակից գիտական հիմնախնդրի ներկայիս վիճակի և զարգացման հեռանկարների հետ:

30. *Սահմանումը* բանավեճի և ուսումնասիրությունների ժամանակ թյուրիմացություններից ապահովագրման ամենահուսալի ձևերից է: Սահմանման նպատակը օգտագործվող հասկացությունների բովանդակության ճշգրտումն է:

31. *Հասկացությունը* միտք է, որի մեջ արտացոլվում են առարկաների տարբերակման հատկությունը և հարաբերությունը միմյանց միջև:

32. *Հարցադրումը*, տրամաբանական մեթոդով ուսումնասիրման դեպքում նախ՝ իր մեջ ներառում է փաստերի բացահայտումը, որոնք առաջ են բերում վերլուծության և ընդհանրացման անհրաժեշտություն, երկրորդ՝ հիմնախնդրի հայտնաբերումը, որը լուծված չէ գիտության կողմից: Յուրաքանչյուր հետազոտություն կապված է փաստերի բացահայտման հետ, որոնք գիտության կողմից բացատրված և համակարգված չեն, դրա տեսադաշտից դուրս են: Դրանց ընդհանրացումը կազմում է հարցադրման բովանդակությունը: Փաստից դեպի հիմնախնդիրը հարցադրման տրամաբանությունն է:

33. *Սկզբունքը* որևէ գիտության, տեսության և ուսմունքի հիմնական ելքային դրույթ է:

34. *Հիմնախնդիրը* խոշոր ընդհանրացված գիտական հարցերի ամբողջություն է, որն ընդգրկում է ապագա ուսումնասիրման տիրույթը:

35. *Ղատողությունը* միտք է, որի օգնությամբ ինչ-որ բան հաստատվում է կամ մերժվում: Այդպիսի միտքը պարունակում է երեք բաղադրիչ՝ սուբյեկտ, ստորոգյալ և կապ:

36. *Տեսությունն* ուսմունք է և տեսակետների կամ գաղափարների համակարգ: Այն ընդհանրացնող դրույթների ամբողջականությունն է, որն ընկած է գիտության ձևավորման հիմքում:

37. *Եզրահանգումը* մտածողություն է, որի միջոցով արդեն իսկ կատարված որոշակի դատողություններից կատարվում է այլ դատողություն՝ կապված նախնական դատողությունների հետ:

38. *Փաստագրական փաստաթուղթը* գիտական փաստաթուղթ է, որը պարունակում է տեքստային, թվային, պատկերավորված և այլ տեղեկատվություն, արտահայտում կամ հետազոտվող առարկայի վիճակը, կամ գիտահետազոտական աշխատանքի արդյունքում հավաքագրված նյութը:

39. *Հայտնագործության բանաձևը* հայտնագործության նկարագրություն է, որը կազմված է հաստատված ձևով և պարունակում է իր էության համառոտ բովանդակությունը:

Գիտության մեջ լեզուն խիստ հատկանշական է. նրա մեջ կան շատ եզրեր և հասկացություններ, որոնք գիտական գործունեության մեջ ունեն կիրառություն: Այդ նրբությունների տիրապետումից է կախված, թե որքանով է մագիստրանտը կարողանում ճիշտ, գրագետ և հասկանալի արտահայտել իր մտքերը, բացատրել այս կամ այն փաստը և այլն:

3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐՈՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

3.1. Թեմայի ընտրությունը

Մագիստրոսական ատենախոսությունների թեմաները որոշվում և հաստատվում են մասնագիտական ամբիոնի կողմից: Ուսանող-մագիստրանտին իրավունք է վերապահվում առաջարկվող ցանկից ընտրել թեման:

Մագիստրոսական ատենախոսությունների թեմաների ցանկը մասնագիտական ամբիոնի կողմից ուսանողներին առաջարկվում է մագիստրատուրայում ուսանելու 2-րդ կիսամյակի սկզբում, որպեսզի ուսանողը երեք կիսամյակի ընթացքում բավարար ժամանակ ունենա զբաղվելու իր թեմայով: Մագիստրոսական ատենախոսության թեմաները պետք է վերաբերեն տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման շրջանակներին և ունենան հետազոտական բնույթ: Մագիստրոսական ատենախոսության թեմայի ընտրության համար ուսանողը գրավոր դիմում է ամբիոնի վարիչին (դիմումի ձևը տե՛ս հավելված 1):

Ատենախոսության թեմայի ձևակերպումը պետք է արտացոլի այն գլխավոր գաղափարը, ըստ որի շեշտադրում է կատարվում աշխատանքում: Թեմայի ընտրության ժամանակ շատ կարևոր է հաշվի առնել կուտակած գիտելիքները, նախկինում այդ թեմայի հետ առնչությունը, ինչպես նաև ուսանողի՝ գիտաժողովների զեկուցումն ու հրատարակած հոդվածները: Ատենախոսության թեման պետք է լինի հստակ ձևակերպված, հիմնավորված և բավարարի ժամանակակից հետազոտական աշխատանքների մակարդակին, պետք է ընձեռի ինքնուրույնություն, ստեղծագործական մոտեցման հնարավորություն:

Մագիստրոսական ատենախոսության թեմայի հաստատումն իրականացվում է ուսանողների դիմումների հիման վրա: Ընտրված

թեման (ինչպես նաև աշխատանքի ղեկավարը) հաստատում: Է տվյալ ամբիոնը: Ի դեպ, թեման հաստատվում է միայն համապատասխան գիտական ղեկավար ապահովելու պայմանում:

Աշխատանքի ղեկավար նշանակվում են, որպես կանոն, մասնագիտական ամբիոնի ղոկտոր, պրոֆեսորները և գիտությունների ֆեկնածու, դոցենտները:

Գիտական ղեկավարն ուղղորդում է մագիստրանտի աշխատանքը՝ օգնելով նրան գնահատել հնարավոր լուծումների տարբերակները, բայց լուծումների ընտրությունը հենց իր՝ մագիստրանտի խնդիրն է: Ղեկավարը պատասխանատու է ընդունվող որոշումների, ստացված արդյունքների ճշտության և փաստացի հստակության համար, եթե աշխատանքը թույլատրում է հրապարակային պաշտպանության:

Մագիստրոսական ատենախոսությունը գրելիս մագիստրանտը օգտվում է իր ուսումնառության վերջին կիսամյակում կազմակերպվող գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում ընծեռած հնարավորություններից և աշխատանքը բերում վերջնական տեսքի՝ հավաքելով փաստացի տվյալներ և կատարելով անհրաժեշտ հետազոտություններ:

3.2. Աշխատանքային պլանի կազմումը

Աշխատանքային պլանը կազմվում է ուսանողի և մագիստրոսական ատենախոսության ղեկավարի անմիջական մասնակցությամբ և սկսվում է թեմայի մշակումից, այսինքն՝ ենթադրյալ գիտական հետազոտության պատկերացումից:

Սկզբում աշխատանքային պլանը միայն ընդհանուր գծերով է բնութագրում հետազոտման առարկան, սակայն հետագայում այդպիսի պլանը կարող է ճշգրտվել, թեև աշխատանքի հիմնական խնդիրը պետք է մնա անփոփոխ:

Աշխատանքային պլանի ձևն ընտրվում է համեմատաբար ազատ: Սովորաբար այն կազմված է սյունակում տեղադրված

խորագրերի ցանկից, որոնք կապված են հետազոտվող թեմայի ներքին տրամաբանությամբ, և որոնք թույլ են տալիս տեղակայման տեղից դատել իրենց նշանակության մասին:

Ատենախոսության պլանը կազմելուց հետո մագիստրանտը պետք է հստակեցնի կատարվելիք աշխատանքների հերթակա-
նությունը և տրամաբանական հաջորդականությունը:

Տրամաբանական հաջորդականությունը թելադրում է խնդրի
լուծման բացահայտումը: Եթե առաջին բաժինն ուսումնասիրված չէ,
չի կարելի անցնել երկրորդին: Ցանկացած աշխատանքում կարևոր
է գտնել գլխավորը, որոշիչը, ինչի վրա էլ անհրաժեշտ է կենտրո-
նացնել ողջ ուշադրությունը տվյալ պահին: Դա հնարավորություն
կտա գտնել պլանավորվող առաջադրանքների օպտիմալ լուծումը:

Այդպիսի մեթոդական մոտեցումը պահանջում է հաշվի առնել
գիտական հետազոտության ռազմավարությունն ու մարտավա-
րությունը: Դա նշանակում է, որ հետազոտողը որոշում է աշխա-
տանքի գլխավոր նպատակը, ձևակերպում հիմնական խնդիրները,
բացահայտում բոլոր հասանելի գործիքները գաղափարների և
մտահղացումների իրականացման համար, ընտրում է անհրաժեշտ
մեթոդները, գտնում յուրաքանչյուր գործողությունը կատարելու
համար ավելի հարմար ժամանակ:

Ստեղծագործական հետազոտության ժամանակ պլանը շարժ-
ընթաց (դինամիկ) է և կարող է փոփոխվել: Այն չի կարող ու չպետք
է արգելակի հետազոտողի գաղափարների և մտահղացումների
զարգացումը, միաժամանակ պահպանելով աշխատանքի հստակ և
որոշակի գիտական ուղղվածությունը:

Դեկավարը ոչ միայն մասնակցում է ապագա ատենախոսության
աշխատանքային պլանի մշակման գործընթացին, այլև մագիստր-
անտի հետ կատարում է այլ աշխատանքներ, մասնավորապես՝

- խորհուրդ է տալիս օգտագործել անհրաժեշտ մասնագի-
տական գրականությունը, այդ թվում՝ էլեկտրոնային գրականու-
թյունը, վիճակագրական տեղեկատուները, արխիվային նյութերը և
թեմայի հետ կապված այլ աղբյուրներ,

- մշակված ժամանակացույցով անցկացնում է նախատեսված պարբերական խորհրդատվություններ,
 - գնահատում է կատարված աշխատանքը ինչպես մաս-մաս, այնպես էլ ամբողջականությամբ,
 - տալիս է իր համաձայնությունը ատենախոսությունը հրապարակային պաշտպանության ներկայացնելու համար:
- Պլանը պետք է լինի ճկուն, որպեսզի հնարավոր լինի ընդգրկել հնարավոր նոր բնագավառներ, որոնք բացահայտվում են նյութի պատրաստման ընթացքում:

3.3. Գրականության ուսումնասիրությունը և փաստացի տվյալների հավաքագրումը

Գիտական հրապարակումների ուսումնասիրությունը ցանկալի է իրականացնել փուլերով.

- ըստ գրականության ցանկի՝ տվյալ գրքի կամ աշխատության ծանոթացում,
- նյութի ընթերցում ըստ հերթականության,
- ընթերցողի ընտրությամբ՝ նյութի որևէ մասի ընթերցում,
- հետաքրքրություն ներկայացնող նյութի դուրսգրում,
- գրվածքի քննադատաբար գնահատում և մուտքագրում՝ որպես ապագա մագիստրոսական ատենախոսության աշխատանքի տեքստի մի մաս:

Անհրաժեշտ է հավաքել ոչ թե ցանկացած, այլ միայն գիտական փաստեր: Գիտական փաստերը գիտական գիտելիքների հիմքը կազմող տարրեր են, որոնք արտացոլում են իրերի և գործընթացների օբյեկտիվ հատկությունները: Գիտական փաստերով որոշվում են երևույթների օրինաչափությունները, կառուցվում տեսություններ և որոշվում օրենքներ:

Գիտական փաստերը բնորոշվում են այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են նորույթը, ճշգրտությունը, անաչառությունն ու հավաստիությունը: Գիտական փաստի նորույթը վկայում է նոր, մինչև

Թրս ոչ հայտնի առարկայի, երևույթի կամ գործընթացի մասին:
Պարտադիր չէ, որ դա լինի գիտական հայտնագործություն, սակայն
դասնոր գիտելիք է, ինչի մասին մինչ հետազոտությունը չկա
որոշակի տեղեկություն:

4. Մագիստրոսական ատենախոսության կառուցվածքը և պաշտպանության կարգը

4.1. Մագիստրոսական ատենախոսության կառուցվածքը և շարադրումը

Մագիստրոսական ատենախոսության կառուցվածքը պետք է ունենա տեսական, պրակտիկ և վերլուծական բաղադրիչներ: Մագիստրոսական ատենախոսությունը սովորաբար շարադրվում է տպագիր, որի ծավալը պետք է լինի 80 էջից ոչ պակաս, իսկ տեսական բնույթի թեմաների դեպքում՝ մինչև 90 էջ, տառատեսակը՝ Arial Armenian, օտարալեզու շարադրանքը՝ Times New Roman և Russian Times, տառաչափը՝ 12, տողերի միջակայքը՝ 1,5, էջի աջ կողմից՝ 10 մմ լուսանցք, ծախից՝ 30 մմ, վերևից՝ 15 մմ, ներքևից՝ 20 մմ, էջերի համարակալումը՝ ներքևում՝ աջից: Տեքստը պետք է գրված լինի A4 չափսի թղթի վրա: Աշխատանքին վերաբերող ծանոթագրությունները պետք է տեղադրվեն էջի ստորին մասում:

Բոլոր մեջբերումները, հղումներն ու վկայակոչումները պետք է պարտադիր կերպով տողատակին նշվեն (հեղինակի, աշխատության անվանումը, հրատարակության վայրը, տարեթիվը և էջը)՝ միջանցիկ համարակալմամբ: Էլեկտրոնային նյութերից մեջբերումներ կատարելիս պետք է նշել ոչ միայն տվյալ ինտերնետ կայքի հասցեն, այլ այդ կայքի այն որոշակի էջը, որից կատարվել է մեջբերումը կամ հղումը:

Աշխատանքի էջերը պետք է համարակալել: Յուրաքանչյուր գլխի շարադրանքը պետք է սկսել նոր էջից:

Աղյուսակների տեղաբաշխումը կախված է դրանց ծավալից: Մեծ աղյուսակները սովորաբար տեղադրվում են հավելվածում, իսկ փոքրերը, որոնք կազմվել են հեղինակի կողմից՝ տեքստի մեջ: Յուրաքանչյուր աղյուսակ ունի իր անվանումը, համարը և չափի միավորը:

Գծապատկերների և գծանկարների համար օգտագործվում է ինքնուրույն համարակալում, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անվանումը և համարը:

Ավանդաբար ստեղծվել է մագիստրոսական ատենախոսության՝ որպես գիտական աշխատանքի կառուցման որոշակի ձև, որի հիմնական տարրերը ըստ հերթականության հետևյալներն են.

1. տիտղոսաթերթ
2. բովանդակություն
3. ներածություն
4. հիմնական գլուխներ
5. եզրակացություն
6. գրականության ցանկ
7. հավելվածներ
8. օժանդակ ուղեցույցներ

Տիտղոսաթերթը ատենախոսության առաջին էջն է և լրացվում է սահմանված կարգով: Տիտղոսաթերթում (տե՛ս հավելված 2), նշվում են բուհի անվանումը, մագիստրոսական ատենախոսության թեման, ֆակուլտետը, ամբիոնը, մասնագիտությունը, մասնագիտացումը, հեղինակը, դեկավարը, ամբիոնի վարիչը, աշխատանքի կատարման տեղը և տարեթիվը: Ավարտուն աշխատանքը վավերացվում է հեղինակի, դեկավարի, ամբիոնի վարիչի ստորագրություններով:

Տիտղոսաթերթին հաջորդում է բովանդակությունը, որտեղ արտացոլված են ատենախոսության բոլոր բաժինները, այդ թվում՝ գրականության ցանկը և հավելվածները: Բովանդակությունում պետք է նշվեն բաժինների էջերը, որոնցով սկսվում են: Բովանդակության վերնագրերը պետք է ճշտորտորեն կրկնեն տեքստի վերնագրերը:

Մագիստրոսական ատենախոսության ներածությունում սովորաբար հիմնավորվում են ընտրված թեմայի արդիականությունը, նպատակը և ներկայացված խնդրի ձևակերպումը, նշվում հետա-

զոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության ընտրված մեթոդը (մեթոդները), նշվում են ստացված արդյունքների տեսական նշանակությունն ու կիրառելիության արժեքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացված դրույթները:

Արդիականությունը ցանկացած ատենախոսությանը ներկայացվող պարտադիր պայման է: Հետևաբար և հասկանալի է, որ դրա ներածությունը պետք է սկսվի ընտրված թեմայի արդիականության հիմնավորմամբ: Ներածության ծավալը կարող է կազմել մինչև 4 էջ:

Որպեսզի ատենախոսությունում ընթերցողին ներկայացվի ընտրված թեմայի մշակման վիճակը, կառուցվում է գրականության հակիրճ ամփոփումը, որը, ի վերջո, պետք է հանգեցնի այն եզրակացության, որ տվյալ թեման դեռ բացահայտված չէ կամ բացահայտված է մասամբ կամ ոչ բոլոր ասպեկտներով, դրա համար էլ այն կարիք ունի հետագա մշակման:

Թեմայի վերաբերյալ ներկայացված գրականության ամփոփումը պետք է ցույց տա մագիստրանտի՝ մասնագիտական գրականության հետ հիմնավոր ծանոթացման աստիճանը, աղբյուրների համակարգման, դրանց քննադատաբար ուսումնասիրման, էականի առանձնացման, այլ հետազոտողների կողմից նախկինում կատարվածը գնահատելու, թեմայի ուսումնասիրման ներկայիս վիճակում գլխավորը որոշելու նրա ունակությունները:

Քանի որ մագիստրոսական ատենախոսությունը սովորաբար նվիրված է լինում ավելի մեղ թեմայի, ուստի նախկին ուսումնասիրողների աշխատանքների ուսումնասիրումն անհրաժեշտ է իրականացնել միայն ընտրված թեմայի հարցերի շրջանակներում, այլ ոչ թե ողջ խնդրի շրջանակներում:

Երբեմն մագիստրանտը, չգտնելով անհրաժեշտ տեղեկություններ իրեն հասանելի գրականության մեջ, համարձակություն է ունենում պնդել, թե հենց իրեն է պատկանում ուսումնասիրման երևույթի առաջին խոսքը, որը, սակայն, հետագայում չի կարողանում ապացուցել: Իհարկե, այդպիսի եզրակացություններ կարե-

լի է կատարել գրականության աղբյուրների մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրություններից և ղեկավարի հետ խորհրդակցելուց հետո միայն:

Ընտրված թեմայի արդիականության հիմնավորումից հետո տրամաբանորեն անցում է կատարվում հետազոտության նպատակների ձևակերպմանը, ինչպես նաև որոշակի խնդիրների ներկայացմանը, որոնք պետք է լուծվեն նպատակներին համապատասխան:

Խնդիրների ձևակերպումը պետք է կատարվի առավել մանրամասն, քանի որ դրանց լուծման ուղիների նկարագրությունը պետք է կազմի աշխատանքի գլուխները: Դա կարևոր է նաև այն պատճառով, որ աշխատանքի գլուխների վերնագրերը ծագում են հենց հետազոտության խնդիրների ձևակերպումներից:

Նպատակներից և խնդիրներից հետո աշխատանքի հեղինակը ներկայացնում է հետազոտության օբյեկտն ու առարկան: Օբյեկտը գործընթաց է կամ երևույթ, որն առաջացնում է խնդրահարույց իրավիճակը, և որն էլ ընտրվում է հետազոտության համար: Հետազոտության առարկան այն է, ինչն ընկած է օբյեկտի սահմաններում: Հետազոտության օբյեկտն ու առարկան որպես գիտական կատեգորիաներ հարաբերվում են միմյանց հետ ինչպես ընդհանուր ձևով, այնպես էլ առանձին տարրերով: Օբյեկտի մեջ առանձնանում է այն մասը, որը հետազոտության առարկան է: Հենց այդ ուղղությամբ էլ կենտրոնացվում է հեղինակի ուշադրությունը, և հենց հետազոտության առարկան էլ որոշում է մագիստրոսական ատենախոսության թեման: Տրվում է նաև տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրների բնութագրումը:

Աշխատանքի հիմնական մասում մանրամասն ուսումնասիրվում են հետազոտության մեթոդաբանությունն ու տեխնիկան, և ընդհանրացվում են արդյունքները: Տվյալ գիտական խնդրի լուծման համար իրենցից հույժ կարևորություն չներկայացնող նյութերը ներկայացվում են հավելվածների շարքում:

Աշխատանքի գլուխների բովանդակությունը պետք է հստակ համապատասխանի թեմային և լիովին բացահայտի այն: Այդ գլուխները պետք է ցույց տան մագիստրանտի կարողությունները՝ նյութը ներկայացնել (շարադրել) սեղմ, տրամաբանորեն և փաստարկված, ինչի շարադրումն ու ձևակերպումը պետք է համապատասխանեն տպագրման ենթակա աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Յուրաքանչյուր գլուխ պարունակում են առնվազն 2 և ավելի պարագրաֆ: Գլուխներից մեկն ունի տեսական բնույթ, իսկ մյուսները՝ վերլուծական և կիրառական:

Մագիստրոսական ատենախոսությունը ավարտվում է եզրակացության մասով, որն այդպես էլ կոչվում է՝ «Եզրակացություն»: Այն նաև ենթադրում է իրականացված աշխատանքի ընդհանրացված գնահատական:

Ատենախոսության եզրակացության մասը ոչ թե կատարած հետազոտությունից ստացված արդյունքների ուղղակի ցանկն է, այլ դրանց սինթեզված ամփոփումը:

Եզրակացությունից հետո ընդունված է ներկայացնել օգտագործված գրականության ցանկը: Այն ատենախոսության էական մասերից մեկն է և արտացոլում է մագիստրանտի ինքնուրույն մտավոր աշխատանքը:

Այդպիսի ցանկի մեջ տեղ գտած գրականության գերակշիռ մասը պետք է իր արտացոլվի գտնի ատենախոսության մեջ: Եթե հեղինակը մեջբերում կամ հղում է կատարում որևէ փաստին կամ այլ հեղինակների՝ աշխատանքներին, նա պետք է անպայման տողատակում նշի, թե որտեղից են կատարված մեջբերումները: Լրացուցիչ նյութերը, որոնք ծանրաբեռնում են աշխատանքը, ներկայացնում են հավելվածներում:

4.2. Մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունը և պահանջվող փաստաթղթերը

Պաշտպանության համար վերջնականապես պատրաստ մագիստրոսական ատենախոսությունը ներկայացվում է գիտական ղեկավարին, որը մեկ անգամ ևս վերանայում է այդ աշխատանքն ամբողջությամբ:

Ղեկավարն իր կարծիքը ներկայացնում է գրավոր տեսքով: Ղեկավարի կարծիքի եզրակացության մեջ նախ և առաջ նշվում է կատարված աշխատանքի համապատասխանությունը այն մասնագիտություններին և գիտության ոլորտներին, որոնց ուղղությամբ բուհը թույլ է տալիս իրականացնել մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանություն: Այնուհետև գիտական ղեկավարը հակիրճ ներկայացնում է կատարված աշխատանքը, նշում նրա արդիականությունը, տեսական մակարդակն ու գործնական կարևորությունը, առաջադրված խնդիրների լուծման խորությունն ու յուրահատկությունը, ինչպես նաև գնահատում այդ աշխատանքի պաշտպանությանը պատրաստ լինելու աստիճանը: Գրավոր եզրակացությունը ավարտվում է մագիստրոսական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին համապատասխանության նշումով:

Մագիստրոսական ատենախոսության եզրափակիչ փուլը պաշտպանությունն է պետական քննական հանձնաժողովի առջև: Այդ հանձնաժողովի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը, որը տվյալ բնագավառի բարձրակարգ մասնագետ է, ռեկտորատի և ղեկանատների ներկայացուցիչներ, ամբիոնի վարիչը, պրոֆեսորադասախոսական կազմի այլ ներկայացուցիչներ: Մագիստրոսական ատենախոսության պաշտպանությանը մասնակցում են նաև գիտական ղեկավարը և գրախոսը: Հանձնաժողովի նիստը համարվում է վավեր, եթե նրա աշխատանքին մասնակցել են հաստատված կազմի անդամների երկու երրորդը:

Աշխատանքները գրախոսվում են այլ ամբիոնների գիտական աստիճան ունեցող դասախոսների, ինչպես նաև այլ գիտական կազմակերպությունների գիտական աշխատողների, իսկ առանձին

դեպքերում՝ համապատասխան բնագավառի բարձրակարգ մասնագետների կողմից: Մագիստրոսական ատենախոսությունը թույլատրվում է պաշտպանության ատենախոսության ղեկավարի գրավոր ներկայացված դրական կարծիքի և ամբիոնի վարիչի թույլտվությամբ: Ամբիոնը կարող է չերաշխավորել այն, եթե՝

- մագիստրանտը չի ավարտել տեսական դասընթացը,
- խախտել է մագիստրոսական ատենախոսության առջև դրված հիմնական պահանջները,
- առկա է ատենախոսության ներկայացման ժամկետների և ձևի անհամապատասխանություն,
- բացակայում է գիտական ղեկավարի կամ գրախոսի կարծիքը,
- գիտական ղեկավարը կամ գրախոսը ներկայացրել են բացասական կարծիք:

Պաշտպանության ժամանակ մագիստրանտը մինչև 15 րոպեի ընթացքում պետական քննական հանձնաժողովին է ներկայացնում ատենախոսության հիմնական դրույթները՝ հիմնավորելով թեմայի արդիականությունը, ներկայացնելով հետազոտության առարկան և օբյեկտը, նպատակները և խնդիրները, օգտագործված մեթոդները, բացահայտելով աշխատանքի բովանդակությունը և հատկապես մեծ ուշադրություն դարձնելով կատարված եզրակացությունների ու առաջարկությունների վրա: Այդ նպատակով մագիստրանտը, նախապես ղեկավարի հետ համաձայնեցնելով, պատրաստում է ելույթի խոսքը:

Պաշտպանությունը անցկացվում է ավելի բարձր մակարդակով, երբ օգտագործվում են տարբեր ցուցադրական նյութեր (սլայդներ, պաստառներ և այլն):

Պետական հանձնաժողովի անդամները գնահատում են ներկայացված աշխատանքը ըստ հետևյալ ցուցանիշների.

- խնդրի դրվածքը, աշխատանքի արդիականությունը և նորույթը,

- հետազոտության մեթոդների ընտրությունը և հիմնավորումը, հետազոտությունների մեթոդիկան, դրա հուսալիության և ճշտության գնահատումը,

- գիտահետազոտական աշխատանքի արդյունքները և դրանց մեկնաբանման մակարդակը,

- ուսանողի ինքնուրույնության աստիճանը և նրա անձնական ներդրումը կատարված աշխատանքում,

- գրախոսի կարծիքը,

- ղեկավարի կարծիքը:

Մագիստրանտի տված պատասխաններից է մեծապես կախված մագիստրոսական ատենախոսության գնահատականը: Ելույթից հետո մագիստրանտին տրվում են հարցեր: Դրանից հետո կարող են արտահայտվել գիտական ղեկավարը և գրախոսը:

Մագիստրոսական ատենախոսությունը ենթակա է պարտադիր գրախոսության: Գրախոսը նշանակվում է գիտության այն ոլորտից, որում իրականացվել է գիտական հետազոտությունը: Նրանում նշվում են և՛ աշխատանքի առավելությունները, և՛ թերությունները, մասնավորապես նյութի շարադրման տրամաբանական շեղումները, ի հայտ են բերվում փաստացի սխալները և այլն: Գրախոսության ժավալը կազմում է 2-5 էջ:

Մագիստրոսական ատենախոսության առավելություններն ու թերությունները մեկնաբանող այս քննադատական փաստաթուղթը ընթերցվում է պետական քննական հանձնաժողովի նիստին՝ աշխատանքի արդյունքների քննարկման ժամանակ: Գրախոսության բովանդակության մասին պետք է տեղեկացվի աշխատանքի հեղինակին պաշտպանությունից 1-2 օր առաջ, որպեսզի նա ծանոթանա դիտողություններին և պատրաստի դրանց պատասխանները (ընդունի կամ մերժի՝ բերելով սեփական փաստարկները): Հանձնաժողովի անդամը, ներկայացնելով գիտական ղեկավարի կամ գրախոսի կողմից աշխատանքի գնահատականը, անհրաժեշտաբար կանգ է առնում այնպիսի հասկացությունների բովանդակության վրա, ինչպիսիք են՝ «նորույթ», «արդիականու-

թյուն» և «գործնական նշանակություն»։ Այնուհետև խոսքը տրվում է մագիստրանտին՝ կատարված դիտողություններին պատասխանելու համար։ Պետական քննական հանձնաժողովի գնահատականը հիմնվում է ատենախոսի ելույթի և պատասխանների, ինչպես նաև գիտական ղեկավարի և գրախոսի կամ գրախոսների կարծիքների վրա։

Ոչ կրեդիտային հենքով ուսուցման համակարգում ավանդական գնահատման սանդղակով ատենախոսությունը գնահատվում է «գերազանց», «լավ», «բավարար» և «անբավարար»։ Կրեդիտային հենքով ուսուցման համակարգում աշխատանքին տրվում է 14 կրեդիտ, իսկ աշխատանքը գնահատվում է 0-100 միավորանոց համակարգով։

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ _____ Ի.
ՈՒՍԱՆՈՂ (ուհի) _____ Ի.

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ հաստատել մագիստրոսական ատենախոսության թեման՝

« _____ »:

Դիմող՝

(ուսանող)

« _____ » _____ 20__թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ֆակուլտետ

Ամբիոն

Մասնագիտությունը կամ մասնագիտացումը

Թեմա

Ամբիոնի վարիչ

Ղեկավար

Կատարող

Երևան 2011

**Մագիստրոսական ատենախոսության կատարման և պաշտպանության
կազմակերպման մեթոդական ցուցումներ
Ուսումնամեթոդական ուղեցույց**

**Հրատարակման է ներկայացրել ՀՊՏՀ կրթական
բարեփոխումների և միջազգային կապերի վարչությունը
Կազմողներ՝**

**Կարեն Համլետի Գրիգորյան, տ.գ.թ., դոցենտ
Սեդա Ալեքսանդրի Կարախանյան**

**Методические рекомендации по составлению
и организации защиты магистерской диссертации
Учебно-методическое пособие**

Управление образовательных реформ и международных связей АГЭУ

Составители:

**Карен Гамлетович Григорян, к.э.н., доцент,
Седа Александровна Караханян**

**Methodological Guidelines of Conducting and Defending Master`s
Thesis**

Academic-Methodological Guidebook

Presented by Department of Educational Reforms and International Relations, ASUE

Authors:

**Karen Grigoryan, PhD in Economics, Associated Professor,
Seda Karakhanyan**

Հրատ. խմբագիր՝ Ռ. Երվանդյան

**Պատվեր՝ 563 : Չափս՝ 60x84¹/₁₆:
1,4 հեղ. մամուլ, 1,5 հրատ. մամուլ,
2 տպ. մամուլ, 1,86 տպ. պայմ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:**

«Տնտեսագետ» հրատարակչություն

**Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության
տպագրական արտադրամասում
Երևան 25, Նալբանդյան, 128**